# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԳՄ ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի բացման և գնահատման նիստի

գ. Ծովինար «13» օգոստոսի 2021թ.
ժ 13:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ս. Բալոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մանուկյան, Հ. Գալստյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. Հայտերը բացվել են 2021թ. օգոստոսի 13-ին՝ ժամը 13:00-ին:
2. Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

| հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի հասցեն |
|---|---|---|
| 1 | «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ | ՀՀ Գղարքունիքի մարզ, գ. Ծակքար |
| 2 | «Նավասարդ Շինարար» ՍՊԸ | Ք. Երևան, Մամիկոնյանց 24/2 |

3. Հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ-ի հայտում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը՝ հրավերի պահանջների նկատմամբ.

- «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ-ի հայտի ապահովումը ներկայացված չէր հրավերով սահմանված կարգով, այնինչ պետք է ներկայացված լիներ: Տվյալ դեպքում խախտվել էր ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի /Ա/ դրույթը:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի դրույթները՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ էլեկտրոնային եղանակով ծանուցել «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը /ծանուցմանը հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում/ շտկել անհամապատասխանությունը:

Մյուս մասնակիցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում էր հրավերով սահմանված վավերապայմաններին և պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Կասեցված նիստը վերսկսել 2021 թվականի օգոստոսի 17-ին ժամը 10-00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովինար, 3-րդ թաղամաս, հրապարակ 33 շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Սահմանված ժամանակահատվածում «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ-ն շտկեց գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած անհամապատասխանությունները և մասնակցի հայտը գնահատվեց բավարար:

| հ/հ | Մասնակցի անվանումը | Հրավերի պահանջներին համապատասխանությունը |
|---|---|---|
| 1 | «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 2 | «Նավասարդ Շինարար» ՍՊԸ | Համապատասխանում է |

Մասնակիցների գնային առաջարկը՝ ՀՀ դրամով

5. Ծովինար համայնքի խմելու ջրագծի կառուցման աշխատանքներ

| ՀՀ | Կազմակերպության անվանումը | Նախահաշվային գինը | Արժեք | ԱԱՀ** | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ | 144478000 | 120000000 | 24000000 | 144000000 |
| 2 | «Նավասարդ Շինարար» ՍՊԸ | | 124763195 | 24952639 | 149715834 |

6. Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ/ ենթակետի դրույթներով՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը.

- էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին՝ 2021 թվականին օգոստոսի 20-ին, ժամը 14-00-ի ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովինար, 3-րդ թաղամաս, հրապարակ 33 շենք հասցեում գտնվող Ծովինարի համայնքապետարանի վարչական շենքում՝ գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել.

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել բանակցությունների վարման օրը, ժամը 14-00-ին, գ. Ծովինար, 3-րդ թաղամաս, հրապարակ 33 շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝____________ Ս. Բալոյան

Անդամներ՝____________ Ա. Մանուկյան

____________ Հ. Գալստյան

Քարտուղար____________ Ժ. Խաչատրյան